ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

0004, Երևան, Ծովակալ Իսակովի պող. 29 Հեռ.՝ 77 81 22

N 21/1-448 «13» 03 2015

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՀՀ ՈԿ-ՇՀԱՊՁԲ-(11/13)-15/7»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով, Ս. Մկրտչյանին (հեռ. 010 77-49-76), մինչև 2015թ. մարտի 25-ը, ժամը 12:00-ը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեում, 2015թ. մարտի 25-ի, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռքբերումը, որոնք կազմված են 11 չափաբաժիններից:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՊԵՏ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ